ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

28. դեկտեմբեր 2017թ. N 3757 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 483-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի» 8-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պետական աջակցության շրջանակներում բուժման խնամքի ծառայություններ մատուցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ ձևավորելու և աշխատանքները կազմակերպելու կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԱՆ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ ԱՆ պաշտոնական կայք էջում,

2) ապահովել սույն հրամանի վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

Լ.ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2017 թվականի դեկտեմբերի «28» - ի
N 3757- Ա հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ Կազմակերպություն), հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պետական աջակցության շրջանակներում, հասարակության ներկայացուցիչների կողմից մշտադիտարկման իրականացման կարգը և հասարակական դիտորդների աշխատանքների շրջանակը: Կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնում է հասարակական դիտորդների խումբը: Հասարակական դիտորդների խումբը (այսուհետ՝ Խումբ) Կազմակերպություններում գտնվող անձանց բուժման և/կամ հսկողության, և խնամքի տակ գտնվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող խումբ է:

2. Խմբի ձևավորման հիմնական նպատակներն են՝

1) Կազմակերպություններում հասարակության կողմից մշտադտարկումների իրականացումը՝ մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ, աջակցություն անձանց խախտված իրավունքների վերականգնմանը և դրանց կանխարգելումը,

2) հոգեկան առողջության բնագավառը կանոնակարգող իրավական ակտերի ուսումնասիրությունը և ըստ անհրաժեշտության ներպետական օրենսդրության մեջ

փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր իրավական ակտեր մշակելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

3) հոգեկան առողջության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակային վերլուծությունների, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն, ինչպես նաև հանրությանը:

ԳԼՈՒԽ 2

ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

3. Խմբի կազմը հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

1) Խմբի անդամության հավակնորդը ներկայացնում է դիմում, որին կցվում է հավակնորդի անձնագրի պատճենը, ինքնակենսագրությունը, իրեն ներկայացնող կազմակերպության երաշխավորագիրը, կազմակերպության կանոնադրությունը և գործունեության համառոտ նկարագրությունը: Ինչպես նաև ներկայացնում է եզրակացություն հոգեկան առողջության վերաբերյալ, համաձայն որի անձը հոգեպես առողջ է կամ ՀՀ-ում գործող հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչում ընդգրկված հոգեկան և վարքային խանգարում ունենալու դեպքում գտնվում է կայուն հոգեկան վիճակում:

4. Խումբը բաղկացած է յոթ անդամից: Յուրաքանչյուր կազմակերպություն կամ կազմակերպություններ միավորում Խմբի կազմում կարող է ունենալ առավելագույնը մեկ ներկայացուցիչ: Խմբի անդամի լիազորությունները տրվում են երեք տարի ժամկետով: Խմբի անդամի լիազորությունները չեն կարող երկարաձգվել:

5. Խմբի կազմում նոր անդամի ընդգրկման մասին որոշումն ընդունվում է Խմբի անդամների պարզ մեծամասնությամբ, որից հետո ներկայացվում է ՀՀ առողջապահության նախարարի հաստատմանը: Կազմակերպությունը պետք է ունենա Խմբի անդամների ցուցակը, որում փոփոխություն կատարելիս պետք է տեղյակ պահվի Կազմակերպությանը:

6. Խմբի կազմից մեկ տարի ժամկետով ընտրվում են Խմբի նախագահ և քարտուղար (անհրաժեշտության դեպքում նաև տեղակալ կամ տեղակալներ): Խմբի նախագահը ղեկավարում է Խմբի գործունեությունը: Նույն անձը կարող է ընտրվել Խմբի նախագահ առավելագույնը երկու անգամ անընդմեջ:

ԳՅՈՒԽ 3

ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Խմբի անդամ կարող է լինել հայերենին տիրապետող, տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

8. Նախապատվությունը տրվում է բժշկ-հոգեբույժի, հոգեբանի, սոցիալական աշխատողի, իրավաբանի մասնագիտություն ունեցող անձանց:

ԳԼՈՒԽ 4

ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

9. Խումբը գործում է հասարակական հիմունքներով:

10. Իր գործունեության շրջանակներում Խումբը առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենսդրությամբ, սույն Կարգով և Խմբի գործունեության էթիկայի կանոններով:

11. Կազմակերպությունում մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով Խումբը կատարում է այցելություններ, օրենքով սահմանված կարգով ուղղում է հարցումներ համապատասխան մարմիններին և կազմակերպություններին:

12. Այցելությունները կարող են լինել պլանային և ոչ պլանային: Յուրաքանչյուր Կազմակերպությունում տարեկան կատարվում է առնվազն մեկ այցելություն:

13. Յուրաքանչյուր այցելություն պետք է կատարվի Խմբի առնվազն հինգ անդամի կողմից, որոնք պետք է ներկայացնեն տարբեր հասարակական կազմակերպություններ կամ կազմակերպությունների միություններ:

14. Այցելությունները կարող են կատարվել առանց զգուշացման աշխատանքային օր և ժամ, չխախտելով Կազմակերպության ներքին կանոնակարգը:

15. Խմբի անդամներն իրավունք ունեն այցելել Կազմակերպության ցանկացած տարածք՝ Կազմակերպության ներկայացուցչի ուղեկցությամբ, առանձնազրույց ունենալ Կազմակերպության ծառայություններից օգտվող անձանց և աշխատակիցների հետ, ծառայություններից օգտվող անձանց դեպքում՝ վերջիններիս և/կամ նրանց օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ, նույնպես չխախտելով կազմակերպության ներքին կանոնակարգը: Կազմակերպությունում բուժման և/կամ խնամքի տակ գտնվող անձանցից և/կամ նրանց օրինական ներկայացուցչից գրավոր համաձայնություն ստանալու

գործընթացը իրականացվում է ՀՀ «Հոգեբուժական օգնության մասին» 25.05.2004թ. օրենքի դրույթների համաձայն:

16. Խմբի անդամներն իրավունք ունեն ծանոթանալ Կազմակերպության փաստաթղթերի բովանդակությանը, այդ թվում կազմակերպությունում բուժման և/կամ խնամքի տակ գտնվող անձանց բժշկական փաստաթղթերին՝ անձի և/կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ՝ ՀՀ «Հոգեբուժական օգնության մասին» 25.05.2004թ. օրենքի դրույթների համաձայն:

ԳԼՈՒԽ 5

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Մշտադիտարկումն իրականացվում է Կազմակերպություն այցելությունների և դրանց հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությանը հաշվետվությունների և հրապարակային առաջարկությունների և զեկույցների ներկայացման ձևով:

18. Յուրաքանչյուր այցի վերաբերյալ Խմբի՝ այցելություն կատարած բոլոր անդամների կողմից ստորագրված հաշվետվությունը ներկայացվում Խմբի նախագահին (հաշվետվության ներկայացման ժամկետները և ձևաչափը սահմանվում են Խմբի գործունեության ներքին կանոններով): Ներկայացված հաշվետվությունների հիման վրա պատրաստվում են տարեկան զեկույցներ: Ըստ անհրաժեշտության կարող են պատրաստվել և ներկայացվել նաև հրատապ և ընթացիկ զեկույցներ, ինչպես կոնկրետ Կազմակերպությունում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ, այնպես էլ մի քանի կամ գործող բոլոր կազմակերպությունների: Խմբի անդամների կողմից պատրաստված բոլոր տեսակի փաստաթղթերը մինչ հրապարակումը պետք է քննարկվեն ՀՀ առողջապահության նախարարության կողմից:

19. Զեկույցների կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը տալիս է իր մեկնաբանությունները՝ տարեկան զեկույցների վերաբերյալ 3 (երեք) ամսվա, ընթացիկ զեկույցների վերաբերյալ 1 (մեկ) ամսվա, իսկ հրատապ զեկույցների վերաբերյալ 5 (հինգ) օրյա ժամկետում: Մեկնաբանությունները հրապարակվում են զեկույցի հետ համատեղ: Եթե մեկնաբանությունները չեն ներկայացվել սահմանված ժամկետներում, զեկույցները կարող են հրապարակվել առանց մեկնաբանությունների:

20. Զեկույցները հաստատվում են Խմբի որոշմամբ, անդամների ձայների առնվազն 2/3-ի համաձայնությամբ (քվեարկության կարգը սահմանվում է Խմբի Գործունեության ներքին կանոններով):

21. Անհրաժեշտության դեպքում, Խմբի նախագահի ՀՀ առողջապահության նախարարությանը գրավոր միջնորդությամբ, Խումբը իր գործունեության շրջանակներում կարող է ներգրավել համապատասխան մասնագիտական ուղղվածությամբ, ՀՀ առողջապահության նախարարության կողմից փորձագետ ճանաչված մասնագետներ:

ԳԼՈՒԽ 6

ԽՄԲԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Խումբը առնվազն եռամսյակը մեկ անգամ հրավիրում և անց է կացնում նիստեր: Նիստերը, որպես կանոն, անց են կացվում դռնբաց, իսկ Խմբի որոշմամբ կարող են կայացվել նաև դռնփակ: Խմբի որոշմամբ նիստերին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները: Յուրաքանչյուր նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ նիստի օրակարգն ուղարկվում է Խմբի բոլոր անդամներին և ՀՀ առողջապահության նախարարություն:

23. Խմբի արտահերթ նիստ կարող է հրավիրել՝

1) Խմբի յուրաքանչյուր անդամ,

2) ՀՀ առողջապահության նախարարը:

24. Նիստը համարվում է կայացած, եթե ներկա է անդամների կեսից ավելին: Որոշման ընդունման համար անհրաժեշտ է Խմբի անդամների ձայների կեսից ավելին, բացառությամբ Խմբի գործունեության ներքին կանոնների հաստատման և Խմբի անդամի լիազորությունների դադարեցման համար ներկայացված միջնորդության դեպքերում, որի համար անհրաշետ է ձայների 2/3-ը:

25. Ընթացիկ կամ տարեկան հաշվետվությունների հաստատման որոշման տակ ստորագրում են Խմբի բոլոր անդամները, ընդորում՝ եթե խմբի որևէ անդամ համաձայն չէ որոշմամբ հաստատված հաշվետվության որևէ կետի հետ, ապա նրա մասնավոր կարծիքը ներկայացվում է հաշվետվությանը կից:

ԳԼՈՒԽ 7

ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

26. Խմբի անդամի լիազորությունները դադարեցվում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով, եթե՝

1) լրացել է Խմբի անդամի լիազորությունների ժամկետը,

2) առկա է Խմբի անդամների երկու երրորդի կողմից ներկայացված միջնորդությունը,

3) առկա է Խմբի անդամի դիմումը իր լիազորությունների դադարեցման վերաբերյալ,

4) առկա է Խմբի անդամի թեկնածությունն առաջադրած կազմակերպության կամ կազմակերպությունների միության դիմումը խմբի անդամի լիազորությունների դադարեցման կամ մեկ այլ թեկնածուով Խմբի անդամի փոխարինման վերաբերյալ,

5) առկա է Կազմակերպության կողմից խմբի անդամի գործունեության վերաբերյալ հիմնավորված բողոք,

6) խախտել է սույն կարգով կամ Խմբի գործունեության էթիկայի կանոններով սահմանված դրույթները: